ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ _____ 2022 թվականի №___-Ն
ք. Երևան

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ, ՍԱԿԱԳՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի №359Ն, 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի №275Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 21-րդ, 22-րդ հոդվածները, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ և 37-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Հաստատել՝
   1) էլեկտրաէներգետիկական համակարգում սակագների հաշվարկման մեթոդիկան՝ համաձայն №1 հավելվածի,
   2) էլեկտրաէներգետիկական համակարգում ակագների սահմանման ու վերանայման կարգը՝ համաձայն №2 հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №359Ն որոշման՝
   1) 1-ին կետում «էներգետիկայի բնագավառում» բառերից հետո լրացնել «(բացառությամբ էլեկտրաէներգետիկական համակարգի)» բառերը,
   2) հավելվածի՝

ա. վերնագրում և 1-ին կետում «էներգետիկայի բնագավառում» բառերից հետո լրացնել «(բացառությամբ էլեկտրաէներգետիկական համակարգի)» բառերը,

բ. 2-րդ կետում «Էներգետիկայի բնագավառում սակագնային» բառերը փոխարինել «Գազամատակարարման և ջերմամատակարարման համակարգերում սակագնային» բառերով,

գ. 2-րդ կետի 1-ին և 3-րդ կետի 4-7-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել,

դ. 9-րդ կետից հանել «(փոքր հիդրոէլեկտրակայանների և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայանների դեպքում՝ մեկ օրինակից)» բառերը, իսկ «30 օր հետո» բառերը փոխարինել «20 աշխատանքային օր հետո» բառերով,

ե. 9.1-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

զ. 15.1-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15.1. Սպառողների համար սակագների սահմանման կամ վերանայման դեպքում՝

1) Հայտն ուսումնասիրության ընդունելու մասին Հայտատուին տեղեկացնելու օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Հայտը տեղադրվում է Հանձնաժողովի ինտերնետային կայքում՝ հնարավորություն ընձեռելով սպառողների շահերը պաշտպանող կազմակերպություններին և շահագրգիռ այլ կողմերին ծանոթանալու Հայտին, ներկայացնելու իրենց առաջարկները և ստանալու պարզաբանումներ, որի ապահովման նպատակով Հանձնաժողովի ինտերնետային կայքում հրապարակվում է նաև համապատասխան ստորաբաժանման հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն,

2) Հայտը Հանձնաժողովի ինտերնետային կայքում հրապարակվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Հայտատուն հրավիրում է քննարկում՝ բոլոր շահագրգիռ կողմերին ներկայացնելու սպառողների սակագների վերանայմանը հանգեցնող գործոնները և իր պարզաբանումները: Քննարկման տեղի և ժամի մասին Հայտատուն պետք է իրազեկի առնվազն 3 աշխատանքային օր առաջ,

3) սակագների սահմանման (վերանայման) մասին որոշման նախագիծը՝ Հանձնաժողովի նիստում քննարկելուց՝

ա. առնվազն 6 աշխատանքային օր առաջ սակագների վերաբերյալ Հանձնաժողովի աշխատակազմի հաշվարկները՝ Հայտով ներկայացված հաշվարկների հետ համեմատականով, տեղադրվում են Հանձնաժողովի ինտերնետային կայքում՝ հնարավորություն ընձեռելով սպառողների շահերը պաշտպանող

կազմակերպություններին և շահագրգիռ այլ կողմերին ծանոթանալու, ներկայացնելու իրենց առաջարկությունները և ստանալու պարզաբանումներ,

բ. առնվազն 1 աշխատանքային օր առաջ սպառողների շահերը պաշտպանող կազմակերպությունների և Անձի ներկայացուցիչների մասնակցությամբ Հանձնաժողովում կազմակերպվում է քննարկում, որի տեղի և ժամի մասին Հանժնաժողովը իր ինտերնետային կայքում տեղադրում է համապատասխան հայտարարություն առնվազն 3 աշխատանքային օր առաջ:»,

է. 17-րդ կետից հանել «(փոքր հիդրոէլեկտրակայանների և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայանների դեպքում՝ 25 աշխատանքային օրվա ընթացքում)» բառերը,

ը. 19-րդ կետում «կատարումից» բառից հետո լրացնել «, ինչպես նաև «Էներգետիկայի մասին» օրենքով նախատեսված դեպքերում» բառերը,

թ. 20-րդ և 21-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«20. Հանձնաժողովն իր նախաձեռնությամբ սակագների վերանայման գործընթաց ձեռնարկելու դեպքում՝

1) այդ մասին գրավոր տեղեկացնում է Անձին.

2) Անձից կարող է պահանջել լիցենզավորված գործունեությանն առնչվող՝ սակագնի տարր կազմող ցուցանիշների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն.

3) եթե վերանայվում են սպառողների համար սահմանված սակագները, ապա՝

ա. սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված գրավոր տեղեկացումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում իր ինտերնետային կայքում հրապարակում է հաղորդագրություն սակագների վերանայման գործընթաց սկսելու վերաբերյալ՝ նշելով նաև սակագների վերանայման գործընթաց սկսելու հանգամանքները.

բ. սույն կարգի 15.1-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ընթացակարգին համապատասխան իրականացնում է քննարկում:

21. Հանձնաժողովն իր նախաձեռնությամբ սակագինը վերանայում է՝ Անձին այդ մասին գրավոր տեղեկացնելու օրվանից հետո 80 աշխատանքային օրվա ընթացքում:»,

ժ. №1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն №3 հավելվածի.

ժա. №2 և №3 հավելվածներից հանել «էլեկտրական էներգիայի,» բառերը,

ժբ. №4 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն №4 հավելվածի,

ժգ. №5 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն №5 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի հունիսի 15-ի «Փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների հաշվարկման մեթոդիկան հաստատելու մասին» №275Ն որոշման հավելվածի 1-ին պարբերությունում «2015 թվականի ապրիլի 22-ի №88Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկայի» 1-ին կետի 1-ին, 2-րդ, 3-րդ և 6-րդ ենթակետերով նշված փոքր հիդրոէլեկտրակայանների» բառերը փոխարինել «կողմից հաստատված էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնների համաձայն մրցակցային պայմաններով գործող արտադրողներ դասակարգված կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի գների, ինչպես նաև 2004 թվականի փետրվարի 9-ից հետո էլեկտրական էներգիայի արտադրության առաջին լիցենզիա ստացած բնական ջրահոսքերի վրա կառուցված և 2005 թվականի նոյեմբերի 8-ից հետո էլեկտրական էներգիայի արտադրության առաջին լիցենզիա ստացած ոռոգման համակարգերի ու խմելու ջրատարների վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայանների» բառերով:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝
   1) 2005 թվականի սեպտեմբերի 16-ի «Էլեկտրական էներգիա արտադրող ընկերությունների կողմից առաքված էլեկտրական էներգիայի (հզորության) սակագների հաշվարկման մեթոդիկան հաստատելու մասին» №125Ն որոշումը,
   2) 2007 թվականի հունիսի 15-ի «Փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների հաշվարկման մեթոդիկան հաստատելու մասին» №275Ն որոշումը,
   3) 2010 թվականի մայիսի 19-ի «Փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի առավելագույն մեծությունը սահմանելու մասին» №241Ն որոշումը,
   4) 2015 թվականի ապրիլի 22-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների

հաշվարկման մեթոդիկան հաստատելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №88Ն որոշումը,

5) 2017 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի և բաշխման ծառայության մատուցման սակագների հաշվարկման մեթոդիկան հաստատելու մասին» №541Ն որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի դեկտեմբերի 10-ից, բացառությամբ սույն որոշման 4-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2023 թվականի հոկտեմբերի 8-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
__ _____ 2022թ.